Արձանագրություն N 2
«ՄԻՊԱ-ՇՀԾՁԲ-15/24» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստի

Երևան, Պուշկինի 56 ա

«02» «05» 2017թ.
ժ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վլադիմիր Հովհաննիսյանը,

Հանձնաժողովի անդամներ՝ Իվետտա Շահբազյանը, Մարիաննա Կատվալյանը,

Տիգրան Մելքոնյանը և Անի Գևորգյանը,

Հանձնաժողովի քարտուղար՝ Արմինե Նամալյանը

<u>Ի. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին</u>

(Վ. Հովհաննիսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ <u>www.armeps.am</u> էլեկտրոնային կայքի միջոցով սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. <<Կարեն Սուքոյան>> ԱՁ,
2. <<Սամվել Հովակիմյան Լևոնի>> ԱՁ,
3. <<Հյուր Սերվիս>> ՍՊԸ

բ/ մասնակիցների կողմից առաջարկված գները.

ՀՀ դրամ

Չափաբաժին	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)	Մասնակիցների անվանումները	Գնային առաջարկ		
			Գին (առանց ԱԱՀ)	ԱԱՀ	Գին (ներառյալ ԱԱՀ)
1	360000	<<Կարեն Սուքոյան>> ԱՁ	190000	0	190000
		<<Սամվել Հովակիմյան Լևոնի>> ԱՁ	355000	0	355000

2. Հրավերով (ծանուցումով) սահմանված՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով (ծանուցումով) պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով (ծանուցումով) սահմանված պայմաններին նախնական տվյալներով.

- համապատասխանում է <<Կարեն Սուքոյան>> ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը:
- չեն համապատասխանում.

<<Սամվել Հովակիմյան Լևոնի>> ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը, մասնավորապես N4 հավելվածում (գնային առաջարկ) բացակայում է առաջարկված ընդհանուր գինը՝ տառերով գրված և <<Հյուր Սերվիս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ բացակայում են հրավերով պահանջված փաստաթղթերը՝ այդ թվում գնային առաջարկը:

Հաշվի առնելով, որ հայտերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, հանձնաժողովը որոշեց մերժել <<Սամվել Հովակիմյան Լևոնի>> ԱՁ-ի և <<Հյուր Սերվիս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. Ընդունել ի գիտություն, որ.
- բանակցություններ չեն վարվել,
- հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա նախնական տվյալներով.
1-ին չափաբաժնի համար
ա) I տեղ զբաղեցնող է ճանաչվել <<Կարեն Սուքոյան>> ԱՁ-ն:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության և գնահատման թերթիկների գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան նշված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10:00:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Նախագահ՝_____ **Վ. Հովհաննիսյան**

Հանձնաժողովի անդամ՝_____ **Ի. Շահբազյան**

Հանձնաժողովի անդամ՝_____ **Մ. Կատվալյան**

Հանձնաժողովի անդամ՝_____ **Տ. Մելքոնյան**

Հանձնաժողովի անդամ՝_____ **Ա. Գևորգյան**

Քարտուղար՝_____ **Ա. Նամալյան**